ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

16 հունվարի հինգշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

3
(3034)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՏԱՏԻԿԻՑ ԺԱՌԱՆԳԱԾ ՔՅԱՄԱՐԸ ՉԵՔ ԿԱՐՈՂ ՎԱՃԱՌԵԼ



2025 թվականի հունվարի 1-ից շրջանառության հարկի օրենսդրական փոփոխություններից հետո ոչ միայն առեւտրական գործունեության հարկը 5%-ից բարձրացավ 10%-ի, այլեւ ոսկի վաճառողը այսուհետեւ պետք է ներկայացնի ապրանքի ձեռքբերման աղբյուրը հավաստող փաստաթղթեր:

Օրինակ՝ այսուհետեւ տատիկն իր ոսկե քյամարը պետք է, ըստ երեւույթին, գույքագրի, ապա կտակով փոխանցի ժառանգին: Կամ որ ավելի վատ է, քավորը նվեր ոսկեղենը կնոջ հետ պարեցնելու հետ մեկտեղ պետք է պարեցնի նաեւ ոսկու գնման հիմքը՝ փաստաթուղթը:

Օրերս ոսկերիչները եւ ոսկեվաճառները իրենց բողոքի ձայնը բարձրացրին Կառավարության առջեւ, որը, սակայն, մնաց անպատասխան եւ անարձագանք:

Ոսկերիչների առաջ դրվել է ոչ միայն ֆակտուրա ներկայացնելու պահանջ, այլեւ մի շարք այլ դրույթներ եւս, որոնց մասին «Ոսկու շուկայի» մի մասն իրազեկվել է, մի մասը՝ ոչ:

Իրազեկման թերթիկում ասվում է. «Իրազեկում 2025 թվականի հունվարի 1-ից շրջանառության հարկի օրենսդրական փոփոխությունների մասին.

Առեւտրական գործունեության հարկը 5%-ից փոխվում է 10%-ի:

Այսպիսով՝ մինչեւ 2025 թվականի հունվարի 1-ը նվազեցվում են միայն ապրանքների ձեռքբերման փաստաթղթերով հիմնված ծախսերի 4%-ը, իսկ 2025թ. հունվարի 1-ից՝ փաստաթղթերով հիմնված բոլոր ծախսերի 9.5%-ը, իսկ շրջանառության 1.5%-ի փոխարեն՝ 1%-ը»:

Այս օրենքի փոփոխությամբ՝ այն կազմակերպությունները, որոնց ապրանքների ձեռքբերումները 2024 թ. ընթացքում կազմել են մինչեւ 24 միլիոն դրամ գումար, նրանք պետք է 2025 թվականի փետրվարի 1-ի դրությամբ կատարեն գույքագրում ապրանքների փաստացի առկայության մասին:

Հաջորդիվ հարկային տեսչական մարմինն իրավունք է ունենալու այցելելու եւ ստուգելու ապրանքային շարժը, որը մինչեւ 2025 թվականի հունվարի 1-ը իրավունք չուներ:

Փաստացի ստուգման պահին ապրանքային մնացորդները եթե տարբերություն տան, ոսկեվաճառները կտուգանվեն: Այսինքն՝ ոսկեղենի բոլոր տեսակները պետք է գրանցված լինեն եւ ունենան ձեռքբերման փաստաթուղթ: Եթե չունենան, հաշվարկված գումարի 20%-ի չափով վճարվելու է տուգանք, իսկ մեկ տարվա ընթացքում կրկին նույն արարքը կատարելու դեպքում՝ 50%-ի չափով տուգանք:

ՔՊ-ականները սրտատրոփ սպասում են Նիկոլ Փաշինյանի հետ հերթական հանդիպմանը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանական պատգամավորները դիմել են ՔՊ խմբակցության ղեկավարությանը՝ Փաշինյանի հետ հանդիպում կազմակերպելու համար: Ակնհայտ է՝ որքան էլ ՔՊ-ականներն առերեւույթ ցույց տան, թե ամեն բան նորմալ է, եւ մեր երկիրն էլ սկանդինավյան երկրների պես խաղաղ ու անհոգ է, իսկ Փաշինյանն էլ պնդի, թե կյանքը եռում է, միեւնույնն է՝ իշխանականներն իրենց ներսում բաց հարցեր ու անհանգստություններ ունեն: Ալիեւի սպառնալիքները սառը ցնցուղ էին ոչ միայն հայ հանրության, այլեւ պատգամավորների մեծ մասի համար. ի վերջո՝ Փաշինյանը իրենց վստահեցրել էր, որ երանելի խաղաղություն են կառուցում, բայց, փաստորեն, փուչիկ է այդ թեզը, որը պայթեցրեց Ալիեւը: ԵՄ անդամության հարցը եւս օդում կախված է: Փաշինյանը մեկ հայտարարեց, թե հանրաքվե չի լինելու, Հայաստանը կմոտենա ԵՄ-ին այնքան, ինչքան թույլ կտա ԵՄ-ն, իսկ հիմա լրիվ հակառակն է անում. Կառավարության նիստում է հարցը քննարկում, ասում, թե 50 հազար հոգին՝ ստորագրող հանրությունը պետք է որոշի ՀՀ եվրոպական ապագան: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ահա այս հարցերն ու ներթիմային «ռազբորկաները» պարզաբանելու նպատակով ՔՊ-ականները Փաշինյանի հետ ցանկանում են հանդիպում ունենալ, իսկ թե երբ կկայանա այն, երբ Փաշինյանը կգնա խորհրդարան, որոշված չէ, ՔՊ-ականները սպասում են խմբակցության ղեկավարի պատասխանին:



Իրավապահ մարմինները լծված են իշխանության յուրացման գործով կալանավորված, ԱԺ նախկին պատգամավոր Ռուստամ Գասպարյանի եղբորը՝ Սերոբ Գասպարյանին եւ մյուս մեղադրյալներին կալանքի տակ պահելու գործին: Այսօր պարզ կլինի՝ դատարանը բավարարե՞լ է նախաքննական մարմնի հերթական միջնորդությունը, եւ Սերոբ Գասպարյանը կշարունակի՞ մնալ ԱԱԾ մեկուսարանում, թե՞ ազատ կարձակվի: Քրեական գործով անցնող մյուս մեղադրյալների մասով եւս նախաքննական մարմինը դիմել է դատարան՝ կալանքը երկարաձգելու միջնորդությամբ: Նշենք, որ Սերոբ Գասպարյանի կալանքը 2 անգամ երկարաձգվել է. վերջին անգամ 2024 թվականի դեկտեմբերի 17-ին դատարանը նրա կալանքը մեկ ամսով երկարաձգեց: Հիշեցնենք, որ Գասպարյանը մեղադրվում է մի քանի Արցախցի անձանց հետ նախնական համաձայնությամբ իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն կատարելու համար: Քրեական հետապնդում էր հարուցվել 7 անձի նկատմամբ: Նրանցից 3-ը կալանավորվել են, իսկ 4-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում. նրանց որոնում են արդեն շուրջ 4 ամիս:

Կոռուպցիոն սկանդալների կենտրոնում հայտնված, իր հայտարարագրի սխալները փոքր վրիպակ համարող ֆինանսների նախարարը (բացահայտումն արեցին փաստաբանները) մամուլին վիրավորելու ճանապարհին է ընտրել: Երեկ նա զազրախոսել է «Ժողովուրդ» օրաթերթի հասցեին՝ շարունակելով իր ստերի շարանը ՀՀ թիվ մեկ ֆինանսական փաստաթղթի մասով: Հիմա՝ ամեն ինչի մասին հերթով: Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի մասին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ նախարարը անտեղյակ է իր կողմից ղեկավարվող ոլորտից կամ հրապարակավ ստում է: Բանն այն է, որ բյուջեի դեֆիցիտը 609 մլրդ դրամ է, իսկ հավաքագրված հարկերը պակաս են 200 մլրդ դրամով: Նախարար Հովհաննիսյանի խոսքով՝ սա ռիսկ է, որի համար կա պահուստային ֆոնդ: Սակայն «Ժողովուրդ» օրաթերթը, ուսումնասիրելով պաշտոնական փաստաթղթերը, գտել էր, որ պահուստային ֆոնդը 95.4 միլիարդ դրամ է, ինչը կրկնակիից քիչ է, քան հարկային եկամուտների սպասվող նվազեցումը: Սա նշանակում է, որ ֆինանսների նախարարը աչքակապությամբ ու ստելով է զբաղված, որպեսզի, ըստ երեւույթին, հավասարակշռի իր երերացող աթոռը 2024 եւ 2025 թվականների աննախադեպ բյուջետային նվազեցումների ֆոնին:

ԶՐՈՒՅՑ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԻՐ ՀԱՅՏՆԱԾ ՓԱՍՏԵՐՆ Է ՀԵՐՔՈՒՄ

Դատարանը «Երկիր Ծիրանի» կուսակցության նախագահ Զարուհի Փոստանջյանի նկատմամբ տուգանք է կիրառել՝ նվազագույն աշխատավարձի յոթնապատիկի՝ 525 հազար դրամի չափով

Զարուհի Փոստանջյանը մեղադրվում է Նիկոլ Փաշինյանին գործակալ անվանելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Զարուհի Փոստանջյանը մանրամասներ է ներկայացրել նիստից (ամբողջական տարբերակը հոլովակի տեսքով կարող եք դիտել ArmLur.am կայքում):

-Տիկի՛ն Փոստանջյան, օրերս Ձեզ դարձյալ դատարան էին կանչել, քանի որ Դուք Նիկոլ Փաշինյանին «գործակալ» էիք որակել, նրան մեղադրել էիք հողերը հանձնելու համար. այս պատճառներով էլ դատարանը Ձեզ մեղադրանք է առաջադրում: Դուք հրաժարվել էիք հերքել Ձեր խոսքերը, ինչի համար դատարանը տուգանք կիրառեց Ձեր նկատմամբ: Մենք հետեւում էինք դատական նիստին, եւ այն բավականին թեժ անցավ. Ձեզ անընդհատ փորձում էին ընդհատել, զրկել խոսքի իրավունքից: Ի վերջո ի՞նչ կատարվեց, ու ի՞նչ գնահատական կտաք կատարվածին:

-Երբ ես դատարանի առջեւ էի կանգնած, դա պարզապես քաղաքացի-իրավական համակարգ հարաբերություն չէր: Կատարվածը քրեական մեղադրանք է, եւ ի տարբերություն քաղաքացիական պատասխանատվության՝ քրեական մեղադրանքը նաեւ ներառում է ազատազրկում: Այս քրեական մեղադրանքը, իհարկե, ծագել էր քաղաքացիական հարաբերություններից:

Նիկոլ Փաշինյանը այն եզակի անձն է, ով եզակի՝ մի դեպքով, քաղաքացիական հայց է ներկայացրել իր կյանքում միայն իմ նկատմամբ: Այսինքն՝ բազմաթիվ մարդիկ Նիկոլ Փաշինյանի հասցեին տարբեր հայտարարություններ են արել, այդ թվում՝ Նիկոլ Փաշինյանը նաեւ ինքն է ընդունել, որ Շուշին պետք չէր իրեն, եւ խոսել է, թե ինչու է բերդաքաղաքը հանձնվել: Այդ մասին նա անձամբ հայտարարել է, ասել, որ ինքն է ստորագրել նոյեմբերի 9-ի չարաբաստիկ հողերի հանձնման փաստաթուղթը, դրա դիմաց գումար է ստացել: Բացի դրանից՝ Նիկոլ Փաշինյանն իր հանրահայտ հոդվածներում է բազմիցս գրել այդ մասին: Այսինքն՝ մի հանրահայտ փաստ, որը իմ շուրթերով է հնչել, փաստորեն այնքան կարեւոր է եղել Նիկոլ Փաշինյանի եւ իր պատվիրատուների՝ տերերի համար, որ նրանք որոշել են, որ ես դա պետք է հերքեմ:

Եթե անգամ ես հերքեմ այդ տեղեկությունը, դրանք հայտնի փաստեր են, եւ միեւնույնն է՝ նույնիսկ այդ դեպքում ճշմարտությունը չի կարող քողարկվել:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԵՐԿԱԿԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ՝ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ինչպե՞ս է Նիկոլ Փաշինյանին քննադատության ենթարկած անձը նշանակվել արդարադատության նախարարի խորհրդական:

Հունվարի 13-ին արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի հրամանով՝ Լյովա Սարգսյանը նշանակվել է նախարարի խորհրդական: Նկատենք, որ Սրբուհի Գալյանի խորհրդական Լյովա Սարգսյանի եղբայրը՝ Կարեն Սարգսյանը, 44-օրյա պատերազմի հերոս է: Արդյունքում, Գյումրու Անի թաղամասում Լյովա Սարգսյանի նշանակումը նախարարի պաշտոնում զարմացրել է բոլորին: Բանն այն է, որ Լյովա Սարգսյանը, եղբոր հերոսաբար զոհվելուց հետո, մշտապես քննադատել է Նիկոլ Փաշինյանին, թե ինչպես նա պատճառ դարձավ բազմաթիվ զոհերի ու իր եղբոր մահվան համար: Արդյունքում իշխանություններին քննադատող Լյովա Սարգսյանը Նիկոլ Փաշինյանի իշխանությունից պաշտոն է ստանում:

Այս հարցի պատասխանը «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց ստանալ Լյովա Սարգսյանից եւ դիմեց արդարադատության նախարարություն, որտեղից ի պատասխան՝ արդարադատության նախարարի խոսնակ Ծովինար Խաչատրյանը պատասխանեց. «Այս բնույթի շահարկումները բարոյական դաշտից դուրս են, խնդրում ենք հարգել հարազատ կորցրած մարդկանց վիշտը, հեռու պահել նրանց անձնական ողբերգությունը հանրային բանսարկության մամլիչից»:

Ստացվում է, որ Փաշինյանի իշխանությանը քննադատելու համար պաշտոն են տալիս միգուցե լռեցնելո՞ւ համար, իսկ ահա երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի նկարը ձեռքում նկարվելու համար պաշտոնից ազատում են արդարադատության փոխնախարար Սիրվարդ Գեւորգյանին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՀԱՋԱՆԳ

Տրանսպորտային համակարգում տիրող քաոտիկ իրավիճակը շարունակվում է:

Մի կողմից վճարային QR կոդերը, մյուս կողմից վալիդատորները, որոնք շատ ժամանակ խափանումներով են աշխատում, մեկ այլ կողմից էլ՝ տրանսպորտային միջոցների սղությունը:

Հիշեցնենք, որ Երեւանի քաղաքապետարանը 2025 թվականի հունվարի մեկից առկա բոլոր հին ավտոբուսները փոխարինեց նորերով: Կարելի է ասել, որ այստեղից էլ սկսեցին բոլոր խնդիրները:

Գանք ամենասկզբից. հին ավտոբուսները, որոնք աշխատում էին 10-15 րոպեն մեկ հաճախականությամբ, փոխարինվելով նոր ավտոբուսներով՝ ուղեւորների համար առաջացրել են նոր անհարմարություններ:

«Ժողովուրդ» օրաթերթին շատ քաղաքացիներ ահազանգում են այն մասին, որ ցուրտ եղանակին 30-40 րոպե սպասում են տրանսպորտին, սակայն ապարդյուն, տրանսպորտային միջոցն այդպես էլ չի գալիս, իսկ տաքսիների գներն այնքան բարձր են, որ ձեռնտու չէ դրանցից օգտվելը:

Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթին քաղաքացիները նաեւ պատմում են, որ նոր տրանսպորտների վարորդները ոչ քաղաքակիրթ ձեւով են շփվում ուղեւորների հետ, ճանապարհին խոսում եւ խաղում են հեռախոսով՝ վտանգելով ուղեւորների կյանքը:

«Ժողովուրդ» օրաթերթին նաեւ փոխանցել են, որ 27 համարի երթուղին սպասարկող վարորդն է հեռախոսով խաղացել վարելու ընթացքում:

Հարկ է նշել, որ Երեւանի քաղաքապետարանը տարածում է հայտարարություններ, որ կա վարորդների պակաս: Օրինակ՝ այս պահի դրությամբ առկա է 195 թափուր հաստիք:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԳԵՐԻՆԵՐԻՆ

Այս տարվա հունվարին Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) աշխատակիցները այցելել են Բաքվում ապօրինի պահվող Արցախի ռազմաքաղաքական նախկին ղեկավարներին: Այս մասին հայտնել է Ադրբեջանում ԿԽՄԿ ներկայացուցչության հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար Իլահա Հուսեյնովան:

«ԿԽՄԿ-ն, իր մանդատի համաձայն, այցելությունների ընթացքում գնահատում է կալանավորների նկատմամբ վերաբերմունքը, նրանց պահման պայմանները եւ հնարավորություն է ստեղծում վերականգնելու կամ շարունակելու նրանց ընտանիքների հետ կապը: Համաձայն ԿԽՄԿ ընթացակարգերի՝ այցելությունների վերաբերյալ դիտարկումներն ու առաջարկությունները տրամադրել է բացառապես կալանավորող կողմը»,- ասված է հաղորդագրության մեջ:

«ՈՐԵՎԷ ՀԻՄՔ ՉԿԱ». ՊՆ-Ն՝ ԷՍԿԱԼԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

«Հռետորաբանությունը՝ հռետորաբանություն, բայց ցանկացած ագրեսիայի համար պետք են հիմքեր»,- նշել է պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը. «Որպես նախարար՝ չեմ տեսնում, որ տարածաշրջանում էսկալացիայի համար հիմքեր լինեն, որովհետեւ յուրաքանչյուր պրոբլեմի մասով Հայաստանն ունի առաջարկներ ու լուծումներ, եւ կարծում եմ՝ հնարավոր է երկխոսություն: Մեր առաջարկները քննարկելու, ըստ անհրաժեշտության՝ ավելի հանրային դարձնելու միջոցով կկարողանանք մեր մոտեցումները, տարածաշրջանում խաղաղության հասնելու ընկալումները բոլորին հասանելի դարձնել»:

ԵՐԵՎԱՆԸ՝ ԵԱՏՄ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՀԱՌ՞Ի

Հայաստանի Հանրապետության տնտեսության աճը ցույց է տալիս, որ Երեւանը Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամակցության հիմնական շահառուն է: Այս մասին հայտնում է ՏԱՍՍ-ը՝ մեջբերելով ՌԴ փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկի հայտարարությունը:

«Վերջին տարիներին Հայաստանի առեւտրի եւ տնտեսության աճը վկայում է այն մասին, որ Հայաստանը ԵԱՏՄ անդամակցության հիմնական շահառուն է»,- նշել է Ռուսաստանի փոխվարչապետը:

Անդրադառնալով հարցին, թե կարո՞ղ է արդյոք որեւէ մեկը զբաղեցնել Հայաստանի տեղը ԵԱՏՄ-ում, Օվերչուկն այդ հարցը ոչ կոռեկտ է անվանել:

«Նման հարց տալ հնարավոր չէ, քանի որ ԵԱՏՄ-ին անդամակցելու հարցը միշտ էլ երկրի անկախ որոշումն է, որը, ելնելով իր շահերից, որոշում է անդամակցել կամ չանդամակցել: Այստեղ ակնհայտ օգուտներ կան»,- ասել է Օվերչուկը:

Նա նաեւ ընդգծել է, որ այդ օգուտները ներառում են էներգետիկայի եւ սննդի անվտանգության ապահովումը եւ տնտեսական զարգացման համար կայուն պայմանների ստեղծումը:

«Եվ ամենակարեւոր օգուտն անարգել մուտքն է հսկայական շուկա, որտեղ պահանջարկ կա նման երկրի ապրանքների համար»:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌԴ-ԻՆ ԲՈՂՔԻ ՆՈՏԱ Է ՀՂԵԼ

2025թ. հունվարի 12-ին Ռուսաստանի Դաշնության համառուսաստանյան պետական հեռուստատեսության եթերում թողարկված «Շաբաթվա լուրեր» հաղորդման առնչությամբ, որի ընթացքում հնչեցվել էին արհեստականորեն գեներացված խոսույթներ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության դեմ, հունվարի 15-ին ՀՀ ԱԳ նախարարությունն է կանչվել Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպան Սերգեյ Կոպիրկինը:

Ինչպես հայտնում է ՀՀ ԱԳՆ-ն, հանդիպման ընթացքում դեսպանին է հանձնվել համապատասխան բողոքի հայտագիր:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՄՆ-ՈՒՄ ՀՐԴԵՀՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Շուրջ 1 շաբաթ է, ինչ չի հաջողվում մարել Կալիֆորնիայում բռնկված հրդեհը: Ավելի քան 30 հազար մարդու հորդորել էին լքել իրենց տները:

Հրդեհը սկիզբ է առել անտառներից, այնուհետեւ հասել մարդկանց տներին: Այս օրերին ԱՄՆ-ն կրել է ավելի քան 60 մլրդ դոլարի վնաս:

Զոհերի թիվը հասել է 24-ի, իսկ 16 հոգուց ոչ մի լուր չկա, եւ այս թիվը կարող է աճել: Հրդեհների հետեւանքով հոլիվուդյան մի քանի աստղեր արդեն կորցրել են իրենց տները, այդ թվում՝ Էնթոնի Հոփքինսը, Փերիս Հիլթոնը, Բիլի Քրիսթալը եւ Մել Գիբսոնը:

Լոս Անջելես քաղաքում բռնկված խոշոր հրդեհից այրվել է նաեւ ԱՄՆ-ի «Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնյա» դպրոցի շենքը:

Կալիֆորնիայի նահանգապետ Գեւին Նյուսոմը հրդեհների պատճառով արտակարգ դրություն է հայտարարել:

Նախագահ Ջո Բայդենը հայտարարության մեջ ասել է, որ հետեւում է զարգացումներին եւ առաջարկել է ցանկացած դաշնային օգնություն, որն անհրաժեշտ է սարսափելի հրդեհը մարելու համար:

Աղետալի իրավիճակին անդրադարձել են նաեւ մի շարք հայ հայտնիներ, ովքեր բնակվում են Ամերկայի Միացյալ Նահանգներում: Նրանք իրենց սոցիալական էջերում կիսվել են իրավիճակով:

Օրեր առաջ եղան խոսակցություններ, թե հրդեհը հասել է Հոլիվուդի բլուրներ, սակայն ավելի ուշ պարզվեց, որ սա կեղծ տեղեկատվություն էր:

Քամին գնալով ուժգնանում է, եւ հրդեհը սպառնում է տարածվել դեպի խիտ բնակեցված Սան Ֆերնանդո հովիտը, որտեղ ապրում է մոտ 1,8 միլիոն մարդ:

ԻՐԱՆԸ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԶԵՆՔ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՆՊԱՏԱԿ ՉՈՒՆԻ

Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը հայտարարել է, որ Թեհրանը միջուկային զենքի ստեղծման նպատակ չի հետապնդում: Իրանի նախագահն այդ մասին ասել է NBC News-ին տված հարցազրույցում:

«Մենք չենք ձգտում միջուկային զենք ստեղծել, բայց մեզ մեղադրում են, թե մենք իբր ռումբ ենք մշակում: Դա սխեմա է, որը նրանք փորձում են օգտագործել պատրվակ ստեղծելու համար»,- ասել է նա:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

«ՀՀ-Ն ԼՈՒԾՈՒՄՆԵՐ Է ԱՌԱՋԱՐԿԵԼ». ՓԱՇԻՆՅԱՆ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ֆեյսբուքյան էջում գրում է. «Հայաստանի Հանրապետության կողմից վարվող բալանսավորված եւ բալանսավորման արտաքին քաղաքականությունը հասնում է իր առաջնային հանգրվանին:

Իրանի Իսլամական Հանրապետության հետ մեր հարաբերություններն առարկայական են առավել քան երբեւէ: Այդ հարաբերությունները հիմնված են բնական շահերի վրա, ինչը փոխգործակցության ամենահուսալի բազան է եւ հարաբերությունների կայունության երաշխիք:

Վրաստանի հետ մեր հարաբերությունները գտնվում են ռազմավարական գործընկերության ուղեծրում՝ բացելով զարգացման նոր հեռանկարներ եւ պոտենցիալ:

Թուրքիայի հետ ըմբռնման տեսանելի բազա է ձեւավորված:

Ադրբեջանի հետ հարաբերություններում առկա բոլոր հարցերին Հայաստանի Հանրապետությունն առաջարկել է կառուցողական լուծումներ: Ոչ թե առաջարկներ է արել, այլ լուծումներ է առաջարկել: Այս համատեքստում տարածաշրջանում էսկալացիաներ հրահրելու բոլոր ջանքերը զուրկ են լեգիտիմությունից եւ հիմքից, ինչը նշանակում է, որ տարածաշրջանը էսկալացնել չի հաջողվի:

Ռուսաստանի Դաշնության հետ մեր հարաբերությունները պրակտիկ են առավել քան երբեւէ, առանցքում ունենալով կոնկրետ հարցեր՝ առանց էմոցիոնալ փաթեթավորման: Մենք նպատակաուղղված ենք այս հարաբերությունները զարգացնել փոխշահավետ համագործակցության եւ ինքնիշխանության հիման վրա:

Ֆրանսիայի հետ մեր բարեկամությունը ամրապնդվել է եւ զարգացել:

Եվրամիության հետ հարաբերությունները սերտ են առավել քան երբեւէ, ինչն արձանագրվում է նաեւ Բրյուսելում:

Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ մեկնարկում է ռազմավարական գործընկերություն:

Հնդկաստանի հետ մեր հարաբերությունները նոր կշիռ եւ իմաստ են ձեռքբերել:

Չինաստանի հետ մեր հարաբերությունները զարգանում են եւ խորանում:

Մերձավոր Արեւելքում գործընկերության նոր հնարավորություններ են ստեղծվել:

Այս դիրքավորումը Հայաստանի անկախության, ինքնիշխանության եւ պետականության հարատեւության օրակարգը հաջողությամբ սպասարկելու ամուր նախադրյալներ է ստեղծում, ինչը կիրագործվի բալանսավորման եւ բալանսավորված արտաքին քաղաքականության առաջիկա փուլերում»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՌԻՃԱՎԱՆՔԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՈՐՊԵՍ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ

Հայաստանի զավթման ադրբեջանական իշխանության ծրագիրն արդեն երկրորդ անգամ Հառիճավանքը ներկայացնում է ադրբեջանական ժառանգություն: Այս մասին գրել է ՀՀ մարդու իրավունքների նախկին պաշտպան Արման Թաթոյանը:

«Ադրբեջանական իշխանական հեռուստաընկերությունը Հայաստանի Շիրակի մարզի Հառիճավանք վանական համալիրը պատմական փաստերի կեղծումով ներկայացնում է՝ որպես «Արեւմտյան Ադրբեջանի» մշակույթի մաս:

Այս տեսանյութում Հառիճավանքը ներկայացվում է՝ որպես ալբանական կրոնական, մշակութային ժառանգություն: Փորձ է արվում հերքելու հայերի՝ որպես առաջին քրիստոնյա ազգ լինելը:

Տեսանյութը հայերի դեմ ռասիստական եւ թշնամանքի ադրբեջանական պետական քարոզի մաս է, որով հետեւողական կեղծիքներով ստեղծվում են Հայաստանի նկատմամբ ագրեսիայի հիմքեր:

Հառիճավանքը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու վանական համալիրներից է, հիմնադրվել է վաղ միջնադարում եւ պատմականորեն եղել է ոչ միայն հայոց հոգեւոր կենտրոն, այլեւ կրթական եւ մշակութային կարեւոր օջախ», - գրել է նա:

ՓԱԼՈՆԸ ՈՂՋՈՒՆԵԼ Է ՀՀ-Ի ԵՎ ԱՄՆ-Ի ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՄՆ կոնգրեսական Փրենկ Փալոնը ողջունում է Ամերիկայի Միացյալ Նահանգների եւ Հայաստանի Հանրապետության միջեւ ռազմավարական գործընկերության մասին պատմության մեջ առաջին փաստաթղթի ստորագրումը: Այս մասին հաղորդագրություն է տարածել ԱՄՆ կոնգրեսականի կայքը: Հաղորդագրության մեջ նշվում է, որ այս համաձայնագիրը մի քանի ամիս տեւած քննարկումների արդյունք է, որոնք սկսվել էին 2024 թվականի հունիսին ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ջեյմս Օ'Բրայենի՝ Հայաստան կատարած այցի ընթացքում:

Այդ այցի ընթացքում Օ'Բրայենը հայտարարել էր ԱՄՆ-ի եւ Հայաստանի միջեւ ռազմավարական երկխոսության շրջանակներում հանդիպում անցկացնելու մասին, որի ընթացքում կքննարկվեն երկկողմ հարաբերությունների խորացման ուղղությամբ ձեռք բերված զգալի առաջընթացը եւ հետագա քայլերը: Ռազմավարական գործընկերության մասին համաձայնագիրը հաջորդ քայլն է տնտեսական եւ էներգետիկ, անվտանգության եւ իրավապահ ոլորտներում, ինչպես նաեւ ժողովրդավարական բարեփոխումների եւ արդարադատության ոլորտում երկրների միջեւ ավելի սերտ համագործակցություն հաստատելու գործընթացում:

«Այս համաձայնագիրն ընդգծում է ԱՄՆ-ի եւ Հայաստանի հարաբերությունների զգալի առաջընթացը: Մի գործ, որը ես եռանդով պաշտպանել եմ՝ որպես Կոնգրեսի հայկական հարցերով խմբի համանախագահ:Սա ցույց է տալիս 2018 թվականի թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանի կառավարության իրականացրած աճն ու կարեւոր բարեփոխումները եւ ընդգծում երկրի՝ որպես Հարավային Կովկասում ԱՄՆ-ի հուսալի գործընկեր հանդես գալու հեռանկարները: Ամենակարեւորը՝ ռազմավարական գործընկերությունը նշանակում է ավելի սերտ երկկողմ կապեր մեր երկրների միջեւ, հետագա ամերիկյան ներդրումներ Հայաստանի ապագայի համար եւ, ընդհանուր առմամբ, ավելի սերտ կապ մեր ժողովուրդների միջեւ: Ուրախ եմ, որ Բայդենի վարչակազմը պաշտոնապես հայտարարեց այս գործընկերության մասին, եւ ես անհամբերությամբ սպասում եմ Պետական դեպարտամենտի եւ Հայաստանի կառավարության հետ սերտ համագործակցությանը՝ այս դրական դինամիկան շարունակելու համար»,- ասել է Փալոնը:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ԽՈՇՈՐ ՉԱՓՈՎ ԿԱՇԱՌՔԻ ԴԵՊՔԵՐ

Շալիկո Նադոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Սերգեյ Աղաջանյանի միջնորդությամբ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարեւոր գործերի քննության վարչության հատկապես կարեւոր գործերով ավագ քննիչ Մանվել Ադամյանին տվել է առանձնապես խոշոր չափերով կաշառք՝ վերջինիս կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով իր որդու՝ զորակոչիկ Փաշա Նադոյանի օգտին գործողություն կատարելուն նպաստելու համար:

Արտյոմ Դավթյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա փորձել է մորեղբոր՝ Հովհաննես Առաքելյանի, հորեղբոր՝ Հրանտ Դավթյանի օժանդակությամբ, համագյուղացի Սերգեյ Աղաջանյանի միջնորդությամբ առանձնապես խոշոր չափերով կաշառք տալ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարեւոր գործերի քննության վարչության հատկապես կարեւոր գործերով ավագ քննիչ Մանվել Ադամյանին՝ վերջինիս կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով իր օգտին գործողություն կատարելուն նպաստելու համար, սակայն հանցագործությունն իր կամքից անկախ հանգամանքներով ավարտին չի հասցրել:

Հովհաննես Առաքելյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա օժանդակել է քրոջ որդու՝ Ատյոմ Դավթյանի կողմից պաշտոնատար անձ հանդիսացող, ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարեւոր գործերի քննության վարչության հատկապես կարեւոր գործերով ավագ քննիչ Մանվել Ադամյանին վերջինիս մտերիմ Սերգեյ Աղաջանյանի միջնորդությամբ առանձնապես խոշոր չափերով կաշառք տալու փորձին:

Սարգիս Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա հորաքրոջ որդու՝ Արթուր Մինասյանի օժանդակությամբ եւ Սերգեյ Աղաջանյանի միջնորդությամբ փորձել է առանձնապես խոշոր չափերով կաշառք տալ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարեւոր գործերի քննության վարչության հատկապես կարեւոր գործերով ավագ քննիչ Մանվել Ադամյանին՝ վերջինիս կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով իր օգտին գործողություն կատարելուն նպաստելու համար, սակայն հանցագործությունն իր կամքից անկախ հանգամանքներով ավարտին չի հասցրել:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՔՆՆՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներքին գործերի նախարարության կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է լրացում կատարել օրենսգրքի 245-րդ հոդվածում՝ սահմանելով, որ փոխադրամիջոցների գույքահարկից ազատվում են նաեւ հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցների սեփականատերերը՝ այդ փոխադրամիջոցի մասով: Այս մասին ասել է ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Մկրտչյանը՝ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի հունվարի 15-ին հրավիրված նիստի ընթացքում ներկայացնելով «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» եւ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» օրենսդրական փաթեթով առաջարկվող փոփոխությունները:

Նախագծով առաջարկվում է սահմանել նաեւ, որ հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցների սեփականատերերը՝ հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվելու մասին քրեական վարույթ հարուցելու պահից մինչեւ փոխադրամիջոցը դրա սեփականատիրոջ տնօրինմանը հանձնելն ազատվում են հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցի գույքահարկից, եթե շարժական գույքի կադաստր վարող մարմնի կողմից Կառավարության որոշմամբ սահմանված կարգով փոխադրամիջոցի գույքահարկի հաշվառում իրականացնող համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնում տեղեկատվություն է ստացվում հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցի պետական գրանցումը կասեցված լինելու մասին:

Փոխնախարարի խոսքով նախագծի ընդունման արդյունքում հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցների սեփականատերերն այդ փոխադրամիջոցի մասով կազատվեն գույքահարկի վճարման պարտավորությունից, իսկ համայնքն իրական հնարավորություն կստանա հանցագործության հիմքով հափշտակված տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ փոխարեն փոխադրամիջոցի գույքահարկի գծով առաջացած հարկային պարտավորության արժեքի չափով որպես հանցագործությամբ պատճառված վնաս գումար գանձել հանցանք կատարած անձից:

Հանձնաժողովը դրական եզրակացություն է տվել օրենքի նախագծին:

ԴԺԲԱԽՏ ԱՎԱՐՏՈՎ ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Հունվարի 14-ին՝ ժամը 13:10-ին, ՆԳՆ ոստիկանության Արմավիրի մարզի օպերատիվ կառավարման կենտրոն «Վաղարշապատ» բժշկական կենտրոնից հաղորդում է ստացվել, որ «կրծքավանդակի ծակած-կտրած թափանցող վերք» ախտորոշմամբ բուժօգնության է դիմել էջմիածնի բնակիչ, 33-ամյա մի տղամարդ: Այս մասին հայտնում են ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից:

Էջմիածինցին հայտնաբերվել, ձերբակալվել եւ կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել է Վաղարշապատի քննչական բաժին: Ավելի ուշ հիվանդանոցից հայտնել են, որ 33-ամյա տղամարդը մահացել է

Ձեռնարկվում են միջոցառումներ հանցագործության գործիք դանակը հայտնաբերելու ուղղությամբ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԻՊ-Ն ԱՅՑԵԼԵԼ Է «ՍԵՎԱՆ» ՔԿ ՀԻՄՆԱՐԿ

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը հունվարի 14-ին այց է իրականացրել արդարադատության նախարարության «Սեւան» քրեակատարողական հիմնարկ:

Հիմնարկի պետ Արտակ Ղազարյանի եւ ՄԻՊ ներկայացուցիչների ուղեկցությամբ Անահիտ Մանասյանը շրջայց է կատարել տարածքով, այցելել կացարաններ, ուսումնասիրել քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց պահման պայմանները:

Այնուհետեւ Մարդու իրավունքների պաշտպանն ու ՄԻՊ ներկայացուցիչներն առանձին հանդիպումներ են ունեցել ազատազրկման դատապարտված անձանց, այդ թվում՝ օտարերկրացի, ցմահ ազատազրկման դատապարտված, հացադուլ հայտարարած անձանց հետ, որի ընթացքում վերջիններս ներկայացրել են իրենց խնդիրները:

Ազատությունից զրկված անձինք, ի թիվս այլնի, բարձրաձայնել են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատմանը, անվտանգային գոտու փոփոխության հնարավորությանը, առողջության պահպանման, կրթության իրավունքներին, զբաղվածությանն առնչվող հարցեր եւ մի շարք այլ խնդիրներ:

«Ազատությունից զրկման վայրերում իրավունքների ապահովման հարցերը մշտապես գտնվում են Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո: Այցերի շրջանակներում վերհանված խնդիրները մանրամասն վերլուծվում են Պաշտպանի կողմից, համապատասխան առաջարկները ներկայացվում են իրավասու մարմիններին՝ ոլորտը բարելավելու նպատակով:

ՉԵՆ ՎՃԱՐՎԵԼ ԽՈՇՈՐ ՉԱՓԻ ՀԱՐԿԵՐ

2024 թվականի հոկտեմբերի 22-ին ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում նախաձեռնված քրեական վարույթով առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ Մ.Խ.-ն, հանդիսանալով կենցաղային սարքավորումների եւ էլեկտրոնիկայի մանրածախ առեւտրով զբաղվող ընկերության գործունեությունը փաստացի ղեկավարող անձ, 2021-2024 թվականներն ընկած ժամանակահատվածում թաքցրել է առանձնապես խոշոր չափերով՝ 337 մլն 384 հզր ՀՀ դրամի հարկեր: Նախաքննության ընթացքում 20 մլն ՀՀ դրամը վերականգնվել է պետական բյուջե: 2025 թվականի հունվարի 10-ին Մ.Խ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով հարկերը, տուրքերը կամ այլ վճարներ չվճարելը):

Վերջինիս նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է բացակայելու արգելքը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 14-ից 15-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 146 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՏԱՁԳՄԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հղել ենք հետեւյալ հարցը. «Տավուշի մարզպետարանի տվյալներով՝ 2024 թվականին Տավուշի մարզի համար վերջնական հաստատվել է սուբվենցիոն 20 ծրագիր, որից 4-ն է իրականացվել, 8-ը՝ մասամբ, 8-ն էլ իրականացման տարբեր փուլում են: Խնդրում ենք հայտնել, թե որո՞նք են մասամբ իրականացված եւ իրականացման տարբեր փուլերում գտնվող, ընդհանուր առմամբ 16 ծրագրերը, որո՞նք են դրանք իրականացնող կազմակերպությունները, ծրագրերից յուրաքանչյուրը ի՞նչ պատճառով է սահմանված ժամկետից հետաձգվել»: Մարզպետարանից պատասխանել են. «2024 թվականին հաստատված սուբվենցիոն ծրագրերի մի մասը կազմված է նաեւ ենթածրագրերից, մասնավորապես, Բերդ համայնքի Բերդ քաղաքի թիվ 2 եւ թիվ 3, Տավուշ, Վ. Ծաղկավան, Չինչին, Վ. Կ. Աղբյուր, Այգեձոր, Արծվաբերդ, Մովսես, Նավուր, Չինարի, Չորաթան, Պառավաքար եւ Այգեպար բնակավայրերի մանկապարտեզների շենքերի եւ բակային տարածքների վերանորոգման ծրագիրը, որը կազմված է 15 ենթածրագրերից, որից 10-ի շինարարական աշխատանքներն արդեն ավարտվել են, իսկ 5-ի աշխատանքները կավարտվեն 2025 թվականին: Նմանատիպ ծրագրեր առկա են նաեւ մարզի մյուս համայնքներում, հետեւաբար դրանք դիտարկվում են կամ մասամբ ավարտված կամ որպես ընթացիկ ծրագրեր»:

ԹԱՓԱՌՈՂ ՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք՝ Տավուշի մարզպետարանը հայտնել է, որ մարզպետ Ղալումյանը մասնակցել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունում նախարար Գնել Սանոսյանի գլխավորությամբ եւ մարզպետների մասնակցությամբ (նախկինում կայացած) հերթական խորհրդակցությունը, ուր անդրադարձ է կատարվել ԱԺ պատգամավորների կողմից ներկայացված «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի եւ հարակից օրենքների նախագծին, քննարկվել է համայնքներում թափառող շների հետ կապված խնդիրը: Տավուշի մարզում թափառող խնդիրը ինչպե՞ս է լուծվելու: Մարզպետարանից լրագրողական հարցապնդմանը պատասխանել են. «Համայնքներում իրականացվում են թափառող կենդանիների ստերջացման, վնասազերծման աշխատանքներ՝ ավելի մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել մարզի համայնքապետարաններին»: Ի՞նչ է նշանակում թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքներ, դա ո՞նց է համապատասխանում կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքին՝ մարզպետ Հայկ Ղալումյանը կիմանա:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՔԱՌՍ

Ե՞ՐԲ ԿԿԱՐԳԱՎՈՐՎԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երեւանի տրանսպորտային համակարգում տիրում են քաոսն ու մի շարք խնդիրներ:

Մի կողմից վճարային QR կոդերը, մյուս կողմից վալիդատորները, որոնք շատ ժամանակ խափանումներով են աշխատում, մեկ այլ կողմից էլ՝ տրանսպորտային միջոցների սղությունը:

Հիշեցնենք, որ Երեւանի քաղաքապետարանը 2025 թվականի հունվարի մեկից առկա բոլոր հին ավտոբուսները փոխարինեց նորերով: Կարելի է ասել, որ այստեղից էլ սկսեցին բոլոր խնդիրները:

Գանք ամենասկզբից. հին ավտոբուսները, որոնք աշխատում էին 10-15 րոպեն մեկ հաճախականությամբ, փոխարինվելով նոր ավտոբուսներով՝ ուղեւորների համար առաջացրել են նոր անհարմարություններ:

«Ժողովուրդ» օրաթերթին շատ քաղաքացիներ ահազանգում են այն մասին, որ ցուրտ եղանակին 30-40 րոպե սպասում են տրանսպորտին, սակայն ապարդյուն, տրանսպորտային միջոցն այդպես էլ չի գալիս, իսկ տաքսիների գներն այնքան բարձր են, որ ձեռնտու չէ դրանցից օգտվելը:

Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթին քաղաքացիները նաեւ պատմում են, որ նոր տրանսպորտների վարորդները ոչ քաղաքակիրթ ձեւով են շփվում ուղեւորների հետ, ճանապարհին խոսում եւ խաղում են հեռախոսով՝ վտանգելով ուղեւորների կյանքը:

«Ժողովուրդ» օրաթերթին նաեւ փոխանցել են, որ 27 համարի երթուղին սպասարկող վարորդն է հեռախոսով խաղացել վարելու ընթացքում:

Հարկ է նշել, որ Երեւանի քաղաքապետարանը տարածում է հայտարարություններ, որ կա վարորդների պակաս: Օրինակ՝ այս պահի դրությամբ առկա է 195 թափուր հաստիք:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. ««Ժողովուրդ» օրաթերթը ահազանգեր է ստանում քաղաքացիներից այն մասին, որ տրանսպորտից օգտվելը դարձել է նոր փորձություն:

Ըստ ահազանգած քաղաքացիների՝ 39 համարի երթուղու վարորդը սպառնացել է, որ եթե QR կոդով վճարումը չի հաստատվում, ապա քաղաքացիներին տուգանք է հասնում 30.000 ՀՀ դրամի չափով:

Հետաքրքիրն այն է, որ տերմինալներից QR կոդ գնելն էլ է խնդիր դարձել, քանի որ տերմինալը կամ չի տրամադրում QR կոդով թերթիկը, կամ էլ տրամադրում է այնպիսին, որը օգտագործման համար պիտանի չէ:

«Ժողովուրդ» օրաթերթը այս խնդրով կապ հաստատեց Երեւանի քաղաքապետարանի մամուլի խոսնակ Հայկ Կոստանյանի հետ՝պարզելու՝արդյոք քաղաքացիներին տուգանելու են նրա համար, որ QR կոդով վճարումն իրականացնել չի հաջողվում:

Հայկ Կոստանյանը «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցեց, որ որպեսզի քաղաքացիներին կարողանան տուգանել, պետք է համապատասխան որոշում լինի, իսկ ներկայումս քաղաքացիներին տուգանելու հարցով որոշում չկա: Տուգանքի նման մեխանիզմ այս պահին չի գործում: Կոստանյանը նաեւ հավելեց, որ տնօրինությանը կփոխանցի, որ նման իրավիճակ է եղել:

Ինչ վերաբերում է տրանսպորտային համակարգում առաջացած խոտաններին, որոնք բարդացնում են քաղաքացիների երթեւեկությունը, Կոստանյանն ասաց, որ իրենք պարբերաբար ասում են՝ ցանկացած առաջացած տեխնիկական խնդրի վերաբերյալ քաղաքացիներն իրենց իրազեկեն, որպեսզի բոլոր տեխնիկական խնդիրներին լուծում տրվի: Կոստանյանը նաեւ հավելեց, որ անընդհատ տեխնիկական վերազինումներ են լինում, պարբերաբար տարբեր փորձարկումներ են իրականացվում, որպեսզի նման դեպքերը հասնեն կամ նվազագույնին, կամ առհասարակ չլինեն:

Հավելենք, որ խնդիրների մեծ մասն առաջանում է QR կոդերի առնչությամբ, որոնք կամ ուղղակիորեն անվավեր են լինում, կամ չեն աշխատում»:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ԵՂԱՆԱԿԻՆ

«Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Գագիկ Սուրենյանը գրում է. «2008թ. այս օրերին Արարատյան դաշտում եւ Երեւանում գիշերային ժամերին ջերմաստիճանը իջավ -26... -28, իսկ լեռնային մարզերում՝ -30... -36 աստիճան: Ցուրտը դա էր, ոչ թե այսօրվա գիշերվա -1... -3 աստիճանը, որը հունվարի համար համարվում է նորմայից 3-5 աստիճանով բարձր ջերմաստիճան: Զգացողական սառնությունը պայմանավորված է արեւի բացակայությամբ եւ բարձր հարաբերական խոնավությամբ»:

ԱԴՐԲԵՋԱՆՅԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ Է ԻՆՔՆԱՍՊԱՆ ԵՂԵԼ

Ադրբեջանցի զինծառայող Ադիլ Բախշալիեւն ինքնասպան է եղել՝ ծառայողական հրազենից կրակելով իր վրա: Դեպքը տեղի է ունեցել օկուպացված Արցախի Հանրապետության Քարվաճառի շրջանում:

Տեղեկությունը փոխանցվել է զինվորական դատախազություն, հարուցվել է քրեական գործ:

ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել է 2024 թվականի կազմակերպված ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի եւ Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտությունների խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական նախագծերի ցանկը:

Իտալիայի ազգային հետազոտությունների խորհրդի հետ ձեռք բերված համաձայնությամբ համատեղ ֆինանսավորման է երաշխավորվել 10 գիտական նախագիծ՝ 24 ամիս տեւողությամբ:

«ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ԻՀ ԱՀԽ-2024» միջազգային մրցույթում երաշխավորված գիտական նախագծերի ֆինանսավորումը կմեկնարկի 2025 թվականի փետրվարից:

ՁԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Համացանցի Facebook, Telegram եւ սոցիալական այլ հարթակներում տարածվում են «Գումարի փոխանակում ֆանտաստիկ արժեքով», «ՀՀ դրամը ՌԴ ռուբլիով բարձր փոխարժեքով փոխելու» եւ նմանօրինակ բովանդակությամբ հայտարարություններ, որոնց արձագանքելով՝ քաղաքացիները դառնում են հանցագործության զոհ:

Վերոնշյալ առաջարկներից օգտվելու դեպքում տարբեր անձինք տարբեր առեւտրային կենտրոններում քաղաքացիներից խաբեությամբ վերցնում են նրանց գումարներն ու հափշտակում:

Հանցագործության զոհ չդառնալու համար Հայաստանի Հանրապետության դատախազությունը հորդորում է քաղաքացիներին գումարների փոխանակումն իրականացնել օրինական կարգով՝ նման գործունեությամբ զբաղվող ընկերությունների միջոցով:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 5 պատահար. 5 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԴԻՄՈՒՄՆԵՐ

Հունվարի 13-ից՝ ժամը 21:00-ից, հասանելի է Անհատական հաշվի տեղեկատվական պորտալը:

Ինչպես տեղեկացրին ՀՀ ՊԵԿ-ից, ֆիզիկական անձինք արդեն կարող են ներկայացնել հիփոթեքային վարկի գծով եկամտային հարկի վերադարձի դիմումները:

43 ՄԼՐԴ ԴՐԱՄ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Պետությունն այս տարի նախատեսում է գյուղատնտեսության ոլորտի վրա ծախսել 42-43 մլրդ դրամ:

Այս մասին 2024 թվականն ամփոփող ասուլիսում հայտնեց էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը: Անասնաբուծության մեջ 2024-ի առաջին 9 ամիսների դրությամբ արձանագրվել է 1.5 տոկոս աճ, բուսաբուծության մեջ՝ 7.6 տոկոս աճ: Պապոյանի գնահատմամբ՝ այս գործընթացում մեծ դերակատարում ունի պետությունը: «Եթե 2021 թվականին պետությունը գյուղատնտեսության վրա ծախսում էր մոտ 21 մլրդ դրամ, ապա արդեն 2023, 2024 եւ 2025 թթ. այս ցուցանիշը կրկնապատկվել է: Ավելի քան 40 մլրդ դրամ եղել է 2023-ին, 2024-ին՝ կրկին 40 մլրդ դրամ: Նախատեսում ենք 42-43 մլրդ դրամ ծախսել գյուղատնտեսության վրա 2025 թվականին»,-ասաց նախարարը:

Նրա գնահատմամբ՝ այս առումով պետության քաղաքականություններն իրենց արդյունքները տալիս են: Ըստ Պապոյանի՝ ժամանակն է, որ էքստենսիվ գյուղատնտեսությունն այլեւս պետության կողմից չդիտարկվի որպես գյուղատնտեսության զարգացման հիմնական միջոց:

ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ԱՌԱՔԱՐԿ

«Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ը հրավիրում է դառնալ գործընկեր՝ առաջարկելով մինչեւ հունվարի 24-ը ձեռք բերել իր կողմից թողարկված դոլարային եւ դրամային պարտատոմսեր:

Ընկերությունը թողարկել է 20 միլիոն դոլար եւ 7.7 մլրդ դրամ ընդհանուր ծավալով պարտատոմսեր:

Դրամային մեկ պարտատոմսի անվանական արժեքը 100,000 ՀՀ դրամ է, իսկ դոլարայինի դեպքում՝ 100 ԱՄՆ դոլար՝ համապատասխանաբար 10.75% եւ 7.45% արժեկտրոնային եկամտաբերությամբ:

Պարտատոմսերի շրջանառության ժամկետը 6 տարի է, արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝ 3 ամիս:

Առավելություններ

Պպարտատոմսերը եկամտային հարկով հարկման ենթակա չեն: Պարտատոմսերը հնարավոր է իրացնել նաեւ երկրորդային շուկայում՝ ներդրողներին ընձեռելով Հայաստանի ֆոնդային բորսայում պարտատոմսերի առուվաճառքի իրականացման հնարավորություն:

ՄԵԿՆԱՐԿ

ՈՎՔԵՐ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ

2024 թվականից մեկնարկել է ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգի երկրորդ փուլը, որի շրջանակում 2024 թվականի հաշվետու տարվա համար հայտարարագրերը ներկայացվում են մինչեւ 2025 թվականի մայիսի 1-ը ներառյալ: Այս փուլում տարեկան հայտարագիր ներկայացնող քաղաքացիների շրջանակն ընդլայնվել է. 2024 թվականի հաշվետու տարվա համար եկամտային հարկի տարեկան հաշվարկ-հայտարարագիր պետք է ներկայացնեն ինչպես նախորդ տարվա՝ 2023 թվականի հաշվետու տարվա համար հայտարարագիր ներկայացնողները, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նոր խմբեր. 2024 թվականի ընթացքում վարձու աշխատող համարված ՀՀ քաղաքացիները:

2024 թվականի ընթացքում քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում հարկվող եկամուտ ստացած ՀՀ քաղաքացիները:

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական եւ համայնքային ծառայողները, հանրային պաշտոններ զբաղեցնող ՀՀ քաղաքացիները:

2023 թվականի արդյունքներով 1 մլրդ դրամ եւ ավելի համախառն եկամուտ հայտարարագրած ՀՀ ռեզիդենտ առեւտրային կազմակերպությունների՝ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ մասնակից (բաժնետեր, փայատեր, անդամ) հանդիսացող ՀՀ քաղաքացիները:

«Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով իրական շահառու համարվող ՀՀ քաղաքացիները:

2024 թվականի ընթացքում 20 մլն դրամ եւ ավելի փոխառություն ստացած ՀՀ քաղաքացիները (վարկը չի դիտարկվում որպես փոխառություն եւ 2024 թվականի ընթացքում 20 մլն դրամ եւ ավելի չափով վարկ ստացած (այդ թվում՝ հիփոթեքային) քաղաքացիները չեն ներառվում այս խմբում):

ՊԵԿ-ը հիշեցնում է, որ մինչեւ յուրաքանչյուր հաշվետու տարվան հաջորդող հարկային տարվա մայիսի 1-ը ներառյալ եկամտային հարկի տարեկան հաշվարկ-հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեն նաեւ այն ֆիզիկական անձինք (անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն), որոնք հարկային տարվա ընթացքում հարկային գործակալ չհանդիսացողներից ստացել են հարկվող եկամուտներ: Ընդ որում, քաղաքացիների այս խումբն ունի եկամտային հարկը նույն ժամկետում պետական բյուջե վճարելու պարտավորություն: Օրինակ, այն անձինք, որոնք նախորդ տարվա ընթացքում վարձակալությամբ տրամադրել են բնակարան:

Ինչպես ներկայացնել հայտարարագիր

Եկամուտների հայտարարագիրը քաղաքացիները ներկայացնում են տարեկան մեկ անգամ՝ ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգի միջոցով: Համակարգը գործում է ինչպես վեբ տարբերակով՝ https://self-portal.taxservice.am/, այնպես էլ բջջային հավելվածի միջոցով: Հավելվածը հասանելի է Apple App Store-ում՝ iOS-ի համար, Google Play Store-ում՝ Android-ի համար: Ներբեռնելիս փնտրման դաշտում պետք է հավաքել Self Portal անվանումը:

Այս համակարգից օգտվելու եւ հայտարարագիր ներկայացնելու համար նախեւառաջ անհրաժեշտ է ունենալ էլեկտրոնային նույնականացում եւ էլեկտրոնային ստորագրություն: Այն անհրաժեշտ է Ձեր եկամուտների վերաբերյալ տվյալների գաղտնիությունը, անվտանգությունը եւ դրանց հասանելիությունը բացառապես Ձեզ համար ապահովելու նպատակով: Անձի նույնականացումն իրականացվում է «Ես եմ» հարթակում երկու տարբերակով՝ բջջային հեռախոսի միջոցով կամ էլեկտրոնային կրիչ պարունակող նույնականացման քարտով:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՇԱՆՈՒՑՈՒՄ

Գ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.գ

- ք. Երեւան, Շենգավիթ, Ա. Չեխովի փողոց, 23 շենք, 46 հասցեում գտնվող 67,78 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 33430000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, Աբովյան ք., 6-րդ փողոց, 16/2 հասցեում գտնվող 94,5 քմ բնակելի տուն, 2,85 քմ կաթսայատուն եւ 0,0138 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 16900000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 03.02.2025թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 03.03.2025թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքերը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԳԱԹ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՈՒՇԱՐՁԱՆ-ՇԵՆՔԸ ԿԴԱՌՆԱ ԹԱՆԳԱՐԱՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը եւ Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը կնքել են մշակույթի ոլորտում համագործակցության հուշագիր:



Համաձայն հուշագրի՝ նախատեսվում է Հանրապետության 32 հասցեում գտնվող հուշարձան-շենքում հիմնել Գրականության եւ արվեստի թանգարանի մասնաճյուղ՝ նվիրված սփյուռքահայ նկարիչ, գորգանկարիչ, հողարվեստի ուղղության հիմնադիր Մարկոս Գրիգորյանին:

Ստորագրման արարողությանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը, Գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն Սյուզաննա Խոջամիրյանը:

Հուշագրի շրջանակում ԿԳՄՍ նախարարությունը եւ Երեւանի քաղաքապետարանն իրենց լիազորությունների շրջանակում կօժանդակեն Հանրապետության 32 հասցեում գտնվող հուշարձան-շենքում Մարկոս Գրիգորյանի ստեղծագործությունների ցուցադրմանը՝ նվիրված արվեստագետի ծննդյան 100-ամյակին, որը լրանում է այս տարի: Նախատեսվում է նաեւ նրա կյանքին եւ գործունեությանը վերաբերող ժամանակավոր ցուցահանդեսների եւ միջոցառումների կազմակերպում: Երեւանի քաղաքապետն ու ԿԳՄՍ նախարարը շրջել են հուշարձանի տարածքում, ծանոթացել պայմաններին եւ քննարկել նախատեսվող աշխատանքները:

«Հուշագրի կետերից ամենաառանցքայինն այս շենքում Մարկոս Գրիգորյանին նվիրված թանգարանի հիմնումն է: Այս տարի նշվում է նրա 100-ամյակը, եւ սա լավագույն նվերը կլինի՝ մեծարելու նրա ստեղծագործական վաստակը»,- ասել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը՝ հավելելով, որ հուշարձան-շենքի ճարտարապետությունը ոճային առումով համահունչ է Մարկոս Գրիգորյանի ստեղծագործություններին:

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը կարեւորել է համագործակցությունը եւ նշել է, որ Երեւանի քաղաքապետարանի կողմից հատկացված թանգարանային տարածքում կիրականացվեն վերանորոգման եւ բարեկարգման աշխատանքներ:

«Թանգարանը դառնալու է Երեւանի կարեւոր մշակութային վայրերից մեկը թե՛ տեղացիների, թե՛ զբոսաշրջիկների համար»,- վստահություն է հայտնել քաղաքապետը:

ՀՀ ԿԳՄՍՆ Հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀԱՍՏԱՏՎԵԼ ԵՆ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ

ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել է 2024 թ. կազմակերպված ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի եւ Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտությունների խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական նախագծերի ցանկը:

Իտալիայի ազգային հետազոտությունների խորհրդի հետ ձեռք բերված համաձայնությամբ համատեղ ֆինանսավորման է երաշխավորվել 10 գիտական նախագիծ՝ 24 ամիս տեւողությամբ:

«ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ - ԻՀ ԱՀԽ - 2024» միջազգային մրցույթում երաշխավորված գիտական նախագծերի ֆինանսավորումը կմեկնարկի 2025 թ. փետրվարից:

ՀՀ ԿԳՄՍՆ

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՐԸ

Գնահատման եւ թեստավորման կենտրոնի տնօրենի հրամանով հաստատվել են 2024/2025 ուստարվա բուհերի ընդունելության առաջին փուլի միասնական քննությունների օրերը:

Համաձայն հրամանի՝ միասնական քննությունների համար, ըստ առարկաների, սահմանված են հետեւյալ օրերը.

25.01.2025՝ «Հայոց լեզու եւ հայ գրականություն»

26.01.2025՝ «Քիմիա», «Ռուսերեն»

01.02.2025՝ «Օտար լեզուներ»

02.02.2025՝ «Ֆիզիկա», «Աշխարհագրություն»

08.02.2025՝ «Մաթեմատիկա»

09.02.2025՝ «Կենսաբանություն», «Հայոց պատմություն»

ՀՀ ԿԳՄՍՆ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Շիրակի մարզպետի աշխատակազմի վարչական շենքում բացվել է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի տարբեր տարիների շրջանավարտների ավարտական աշխատանքների ցուցահանդեսը: Ներկայացված են շուրջ 2 տասնյակ տարաբնույթ թեմատիկաներով աշխատանքներ: Ցուցահանդեսները շարունակական են լինելու, նախատեսվում է թեմատիկ ու անհատական ցուցահանդեսների կազմակերպում: «Աշխատանքներում գույն ու ռիթմ կա, աբստրակտ մտածողություն, լույսի եւ ստվերի հիանալի համադրություն, հարթության վրա իրականության կենդանացում, տարածության, ծավալի պատրանք ու մտքի թռիչքի հնարավորություն: Իսկ սա առօրյա աշխատանքային ծանրաբեռնվածությունից, պաշտոնական հանդիպումներից ու քննարկումներից հետո արվեստի հետ հաղորդակից լինելու, արվեստով հիանալու հնարավորություն է, ինչն ինձ համար կարեւոր է»,- նշեց Շիրակի մարզպետ Դավիթ Առուշանյանը՝ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի տնօրեն Վահագն Ղուկասյանի հետ ցուցահանդեսում ներկայացված աշխատանքներին ծանոթանալիս:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐԹՈՒՐ ՍԵՐՈԲՅԱՆԸ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է «ՇԵՐԻՖ»

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի անդամ Արթուր Սերոբյանը հեռացել է «Արարատ-Արմենիա»-ից՝ միանալով մոլդովական «Շերիֆ»-ին:

Այս մասին հայտնում է «Արարատ-Արմենիա»-ի մամուլի ծառայությունը: Արթուր Սերոբյանը «Շերիֆ» է տեղափոխվել վարձավճարով:

«Շերիֆ»-ը Մոլդովայի չեմպիոն է դարձել 20 անգամ, 12 անգամ տիրել է երկրի գավաթին, 7 անգամ էլ արժանացել է Մոլդովայի Սուպերգավաթին:

ՀԱՂԹԱՆԱԿ՝ ՇԱԽՄԱՏՈՒՄ

Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տանը մեկնարկեց Հայաստանի տղամարդկանց 85-րդ առաջնությունը:

Մրցաշարի անդրանիկ տուրում հաղթանակ տոնեցին Մամիկոն Ղարիբյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը եւ Ջավեն Անդրիասյանը: Ոչ-ոքի ավարտվեցին Տիգրան Հարությունյան-Արթուր Դավթյան, Բենիկ Ագասարով-Կարեն Գրիգորյան պարտիաները:

Հայաստանի առաջնության երկրորդ տուրը կկայանա հունվարի 15-ին: Միմյանց դեմ կմրցեն՝ Դավթյան-Սարգսյան, Հովհաննիսյան-Անդրիասյան, Հայրապետյան-Պետրոսյան, Գրիգորյան-Ղարիբյան եւ Հարությունյան Տ.-Ագասարով զույգերը:

ՌՈՆԱԼԴՈՒՆ ԱԿՈՒՄԲ ԿՍԵՓԱԿԱՆԱՃՆՈՐՀԻ

Կրիշտիանու Ռոնալդուն կդառնա Սաուդյան Արաբիայի «Ալ-Նասրի» համասեփականատեր՝ ակումբի հետ նոր պայմանագրի պայմաններով: Այս մասին հայտնում է Marca-ն:

Աղբյուրի տեղեկություններով՝ 39-ամյա խաղացողը կստանա բաժնետոմսերի 5 տոկոսը: Պորտուգալացի աստղը նոր պայմանագրից տարեկան պետք է վաստակի 200 միլիոն եվրո: Այսպիսով՝ Կրիշտիանուն կշարունակի մնալ աշխարհի ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստը եւ շաբաթական կվաստակի մոտ 3,8 միլիոն եվրո: Ընթացիկ մրցաշրջանում «Ոսկե գնդակի» հնգակի դափնեկիրը «Ալ-Նասրի» կազմում անցկացրել է 20 հանդիպում՝ դառնալով 17 գոլի եւ 3 գոլային փոխանցման հեղինակ:

ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի երրորդ դարպասապահ Արսեն Բեգլարյանը հեռացել է «Արարատ-Արմենիայից» եւ ազատ գործակալի կարգավիճակում տեղափոխվել Չարենցավանի «Վան», հաղորդում է ակումբի մամուլի ծառայությունը:

31-ամյա Բեգլարյանը հանդես է եկել նաեւ «Միկա», «Գանձասար», «Ալաշկերտ», «Ուրարտու», բելառուսական «Դնեպրո» Մոգիլյով, լատվիական «Լիեպայա» ակումբներում:

Բեգլարյանը 16 խաղում պաշտպանել է Հայաստանի ազգային հավաքականի դարպասը:

● *Հունվարի 29-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Կաբարե ռեստարտ» 16+ պներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե որ փաստաթղթերը ապոստիլով վավերացման ենթակա չեն:

Սուրեն Պետրոսյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ ապոստիլով վավերացման ենթակա չեն՝

1) դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալների տված փաստաթղթերը,

2) առեւտրային կամ մաքսային գործունեության հետ ուղղակիորեն կապված վարչական փաստաթղթերը:

Կոնվենցիայի անդամ պետությունների իրավասու մարմինների՝ տվյալ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով եւ իրենց լիազորությունների շրջանակներում տրված փաստաթղթերը, որոնք վավերացված են ապոստիլով, Հայաստանի Հանրապետության տարածքում համարվում են վավեր, առանց հյուպատոսական վավերացման կամ այլ լրացուցիչ օրինականացման:

Վերը նշված փաստաթղթերի՝ ապոստիլով վավերացված լինելը պարտադիր է, եթե Հայաստանի Հանրապետության օրենքով այլ բան նախատեսված չէ, կամ Հայաստանի Հանրապետության միջազգային այլ պայմանագրերով վերացվել, պարզեցվել է օրինականացման ընթացակարգը, կամ փաստաթուղթն ազատվել է օրինականացումից:

Ապոստիլով չեն վավերացվում պաշտոնական այն փաստաթղթերը, որոնք ուղարկվում են «Քաղաքացիական, ընտանեկան եւ քրեական գործերով իրավական օգնության եւ իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիային միացած ԱՊՀ անդամ երկրներ, ինչպես նաեւ Բուլղարիա, Լիտվայի եւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված մի շարք այլ երկրներ: Եթե պետությունը Հաագայի կոնվենցիայի անդամ չէ, ապա փաստաթղթերի օրինականացումը (լեգալիզացիա) կատարվում է հյուպատոսական ճանապարհով:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետտուրքի չափը 7 հազար դրամ է: Այն վճարվում է ՀՀ պետբյուջեի 900005163523 հաշվեհամարին ցանկացած բանկի կամ նախարարությունում գտնվող վճարման տերմինալների միջոցով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ հայրության որոշման պետական գրանցման համար:

Օֆելյա Անանյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Օ. Միրզոյանի հարցին ի պատասխան տեղեկացնում ենք, որ հայրության ճանաչման պետական գրանցման համար երեխայի մոր եւ երեխայի նկատմամբ հայր ճանաչող անձի համատեղ դիմումը կարող է տրվել երեխայի մոր հղիության ընթացքում՝ ծննդի պետական գրանցման ժամանակ կամ դրանից հետո: «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով, նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած համապատասխան վճռի հիման վրա հայրության ճանաչման պետական գրանցման համար դիմումը կարող է ներկայացվել բացառապես երեխայի ծննդի պետական գրանցումից հետո՝ շահագրգիռ անձի կողմից: Հայրության ճանաչման պետական գրանցման համար ներկայացվում են՝

1) համատեղ դիմումի դեպքում՝ երեխայի նկատմամբ իրեն հայր ճանաչող անձի եւ երեխայի մոր անձը հաստատող փաստաթղթերը.

2) երեխայի ծննդի գրանցման մասին վկայականը կամ ակտային գրանցման տվյալները, եթե հայրության ճանաչման գրանցումը կատարվում է երեխայի ծննդի պետական գրանցումից հետո.

շարունակելի

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայրության ճանաչման պետական գրանցումը կատարվում է դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու նույն աշխատանքային օրը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Գունագեղ ու աբստրակտ այս գեղանկարները գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի տարբեր տարիների շրջանավարտների ավարտական աշխատանքներն են, որոնք երեկ ներկայացվեցին ցուցահանդեսում:

Ցուցահանդեսը Շիրակի մարզպետի աշխատակազմի վարչական շենքում էր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-15 -20 -2 + 2
Կոտայքի լեռներ	-10 -15 -2 + 2
Կոտայքի նախալեռներ	-4 - 9 0 + 3
Գեղարքունիք	-8 - 11 -2 + 1
Լոռի	-4 - 8 +7 + 10
Տավուշ	0 -2 +3 + 6
Արագածոտնի լեռներ	-15 - 18 -2 + 2
Արագածոտնի նախալեռներ	-5 - 9 -2 + 2

Արարատ	0 - 5 +2 + 4
Արմավիր	-2 - 5 +2 + 4
Վայոց ձորի լեռներ	-6 - 9 +2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +2 + 5
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	0 + 3 + 7 + 10
ԼՂՀ	-2 - 6 + 8 + 10
Երեւան	-1 - 3 0 + 2

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.1.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*